Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 17-04-2023 թ. որոշմամբ
««ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 5 չկա
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04571
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-05-14
1.5 ՀՎՀՀ-ն		02562459
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)41010532
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.enterprisearmenia.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@isc.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Լևոն Օհանեսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	68	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Պետական աջակցություն ՀՀ-ում ներդրումային ծրագրերի խթանմանը, իրականացմանը և հետներդրումային սպասարկմանը	177,800,000
	Արտահանողի զարգացման դրամաշնորհներ ծրագիր	10,817,320
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում	167,458,270
	Ընդլայնվիր համագործակցելով	1,465,668

Digitally signed by GASPARYAN PAYTSAR 5505830455
Date: 2023.06.28 17:21:54 AMT

	Սևծովյան ավազանի Խելացի գյուղատնտեսություն	12,677,255
	Գինու գործ	5,270,768
	Ենթադրամաշնորհների տրամադրում Արցախից տեղահանված սկսնակ գործարարներին	5,302,726
	Ֆրանսիայից Հայաստան վերադարձողների վերահաստատմանն աջակցող ծրագիր	2,176,278
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Պետական աջակցություն ՀՀ-ում ներդրումային ծրագրերի խթանմանը, իրականացմանը և հետներդրումային սպասարկմանը	80,011,524	
ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում	11,400,000	
Ենթադրամաշնորհների տրամադրում Արցախից տեղահանված սկսնակ գործարարներին	45,580,000	
Կանանց կողմից ղեկավարվող ստարտափների դրամաշնորհային ֆոնդի կառավարում	4,080,100	
Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար	8,693,252	
Սևծովյան ավազանի Խելացի գյուղատնտեսություն	6,536,257	
Գինու գործ	7,729,314	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	507,758,060	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	164,030,447	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____45____էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհուրդ	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն	9
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armeı
T + 374 10 50 09 64/61

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2022թ. օգոստոսի 22-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությամբ արտահայտվել է առանց վերապահման կարծիք՝ այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Grant Thornton

Ի լրումն, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 27-ում, Ընկերության ղեկավարությունը վերաներկայացրել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների որոշ հոդվածներ՝ ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների հետ համապատասխանեցնելու նպատակով: Մեր կողմից աուդիտի են ենթարկվել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

26 հունիսի 2023թ.

Հոգաբարձուների խորհուրդ

Նիկոլ Փաշինյան

ՀՀ վարչապետ, հոգաբարձուների խորհրդի նախագահ

Տիգրան Խաչատրյան

ՀՀ փոխվարչապետ, հոգաբարձուների խորհրդի անդամ

Մհեր Գրիգորյան

ՀՀ փոխվարչապետ, հոգաբարձուների խորհրդի անդամ

Վահան Քերոբյան

ՀՀ էկոնոմիկայի նախարար, հոգաբարձուների խորհրդի անդամ

Վահե Հովհաննիսյան

ՀՀ ֆինանսների նախարար, հոգաբարձուների խորհրդի անդամ

Արարատ Միրզոյան

ՀՀ արտաքին գործերի նախարար, հոգաբարձուների խորհրդի անդամ

Գնել Սանոսյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, հոգաբարձուների խորհրդի անդամ

Ռոբերտ Խաչատրյան

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար, հոգաբարձուների խորհրդի անդամ

Բաբկեն Թունյան,

ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, հոգաբարձուների խորհրդի անդամ

Գևորգ Պապոյան

ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովի նախագահ, հոգաբարձուների խորհրդի անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա-յացված)
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	342,037	369,442
Ոչ նյութական ակտիվներ	5	13,946	17,266
Ներդրումներ բաժնետոմսերում	6	1,150,500	1,150,500
Երկարաժամկետ բանկային ավանդներ	7	1,636,896	1,416,667
		3,143,379	2,953,875
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		17,018	16,488
Դեբիտորական պարտքեր	8	45,753	35,629
Կարճաժամկետ բանկային ավանդներ	7	270,806	556,053
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	151,475	324,333
		485,052	932,503
Ընդամենը ակտիվներ		3,628,431	3,886,378

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Զուտ ակտիվներ			
Սահմանափակ օգտագործմամբ զուտ ակտիվներ	10	3,297,240	3,297,240
Կուտակված արդյունք		(1,075,733)	(953,846)
		2,221,507	2,343,394
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	339,926	368,217
Վարկեր և փոխառություններ	12	360,290	334,531
		700,216	702,748
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	423,892	423,893
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	72,017	72,093
Հետաձգված եկամուտ	14	111,853	192,447
Ֆինանսական երաշխավորություններ	15	98,946	151,803
		706,708	840,236
Ընդամենը զուտ ակտիվներ և արտավորություններ		3,628,431	3,886,378

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023 թ. հունիսի 26-ին:

Լևոն Օհանեսյան
Գլխավոր տնօրեն

Պայծառ Գասպարյան
Գլխավոր հաշվապահ

ՀԻՄՆԱԴՐԱՄ ՖՈՆԴ FUND 02562459

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա-յացված)
Շնորհներից եկամուտ	16	282,040	421,300
Այլ եկամուտներ		98,386	127,671
Ծրագրերի իրականացման ծախսեր	17	(115,957)	(173,277)
Գործառնական ծախսեր	18	(434,417)	(404,861)
Արժեզրկման կորուստ		(149,953)	(177,241)
Ֆինանսական երաշխավորությունների (աճ)/նվազում		52,857	(64,801)
Գործառնական գործունեությունից արդյունք		(267,044)	(271,209)
Ֆինանսական եկամուտ	19	164,040	434,169
Ֆինանսական ծախսեր	19	(25,759)	(23,854)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		7,041	(1,310)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(121,722)	137,796
Շահութահարկի գծով ծախս	20	(165)	(8,051)
Տարվա շահույթ/(վնաս)		(121,887)	129,745
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(121,887)	129,745

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Սահմանա-փակ օգտագործ-մամբ զուտ ակտիվներ	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	3,297,240	(1,083,591)	2,213,649
Տարվա շահույթ	-	129,745	129,745
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	3,297,240	(953,846)	2,343,394
Տարվա վնաս		(121,887)	(121,887)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	3,297,240	(1,075,733)	2,221,507

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Շնորհներից մուտքեր	197,829	414,789
Ենթադրամաշնորհների տրամադրումից ելքեր	-	(45,170)
Մատուցված ծառայություններից մուտքեր	28,776	24,017
Երաշխավորությունների հետվերադարձից մուտքեր	50,707	48,063
Տրամադրված երաշխավորությունների զծով պահումներ	(102,193)	(139,429)
Վճարումներ մատակարարներին	(150,819)	(110,774)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(264,979)	(275,878)
Վճարված շահութահարկ	-	(900)
Այլ հարկերի և տուրքերի վճարումներ պետբյուջե	(124,593)	(129,082)
Այլ ելքեր	(3,876)	(6,638)
Այլ մուտքեր	462	7,925
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(368,686)	(213,077)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսային եկամուտ	152,727	172,797
Ավանդների տեղաբաշխումից զուտ դրամական հոսքեր	(24,757)	(625,861)
Շահաբաժինների ստացում	70,004	80,006
Հիմանակն միջոցների օտարումից մուտքեր	1,315	515
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,088)	(11,836)
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ	198,201	(384,379)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների մարում	-	(515)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	-	(515)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(170,485)	(597,971)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(2,373)	(758)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	324,333	923,062
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	151,475	324,333

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, նախկինում «Փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ («Հիմնադրամ») ստեղծվել է ՀՀ Կառավարության կողմից 2002թ. և հանդիսանում է փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) պետական աջակցության ծրագրերի իրականացնողը և օտարերկրյա և տեղական ներդրումների և վերաներդրումների խթանողը Հայաստանում: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է ՀՀ-ում օտարերկրյա և տեղական ներդրումների և վերաներդրումների խթանմանը, մասնավորապես.

- Հայաստանի զարգացման ռազմավարական առաջնահերթություններին, գերակա հայտարարված ոլորտների և երկրի ներդրումային քաղաքականությանը համահունչ ներդրումների ներգրավմանն ուղղված՝ գործարար և ներդրումային առաջարկների փաթեթների մշակում, առանձին ոլորտների և ներդրումային հնարավորությունների անձնագրավորում և տեղեկատվական-վերլուծական փաթեթների ձևավորումը,
- «Մեկ պատուհանի» սկզբունքով օտարերկրյա և տեղական ներդրողներին աջակցության տրամադրումը Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման համար,
- Օտարերկրյա ներդրողներին նախաստեղծման փուլում աջակցության ցուցաբերումը՝ գործարկման պահից տեղեկատվական և օժանդակ ծառայությունների մատուցում,
- Մարքեթինգային, տեղեկատվական և աջակցության ծառայությունների միջոցով օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ներգրավումը, այդ թվում՝ ավանդական, թվային և սոցիալական մարքեթինգային ծրագրերի և գործարար քարոզարշավների միջոցով, օտարերկրյա ներդրումների ներգրավմանն ուղղված արշավների իրականացումը,
- Մարքեթինգի, տեղեկատավական օժանդակության և շահերի առաջմղման ծառայությունների միջոցով (հետներդրումային ծառայություններ) Հայաստանում գործող օտարերկրյա ներդրողների բիզնես գործունեության աճի նպաստումը,
- Օտարերկրյա և տեղական ընկերությունների միջև գործարար կապերի ստեղծումը, հմտությունների, տեխնոլոգիաների, նորարարությունների և միջազգային կապերի տարածման խթանումը,
- Պետական կառավարման համակարգի մարմինների, մասնավոր հատվածի ընկերությունների հետ ամուր գործընկերային հարաբերությունների զարգացմանը նպաստումը՝ ապահովելու ներդրողներին արդյունավետ ծառայությունների մատուցումը,
- Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը և, անհրաժեշտության դեպքում, Հիմնադրամի լիազորությունների շրջանակներում համատեղ ծրագրերի իրականացումը և ՀՀ կառավարության կողմից պատվիրակված ծրագրերի կառավարումը,
- Հիմնական գործառույթների իրականացման ընթացքում գործարար և ներդրումային միջավայրի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության փոխանցումը համապատասխան գերատեսչություններ՝ Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարեփոխումների գործընթացներին աջակցելու նպատակով,

Հիմնադրամի գործունեությունն ուղղված է ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին տարատեսակ աջակցություններ ցուցաբերելուն, մասնավորապես.

- պետական կառույցների հետ կապի հաստատում,
- գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացում,
- բիզնեսի զարգացման, նորարարական, հետազոտական և այլ ծրագրերի իրականացում,
- նոր ՓՄՁ-ների ստեղծման աջակցություն։

Հիմնադրամը ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն է ցուցաբերում հետևյալ տեխնիկական և ֆինանսական աջակցության ծրագրերի միջոցով.

ա) Տեխնիկական աջակցության ծրագրեր՝

- տեղեկատվական աջակցություն,
- բիզնես խորհրդատվություն և ուսուցման ապահովում,
- իրացման խթանում,
- սկսնակ գործարարներին աջակցություն,
- հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացման աջակցություն։

բ) Ֆինանսական աջակցության ծրագրեր՝

- վարկային երաշխավորությունների տրամադրում,
- սեփական կապիտալի ֆինանսավորում։

Հիմնադրամն իր ծառայությունները հիմնականում մատուցում է մրցութային կարգով ընտրված մասնագիտացված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով։ Տրամադրվող ծառայությունները համաֆինանսավորվում են Հիմնադրամի կողմից։

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 45 մարդ (2021թ.՝ 51 մարդ)։

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Մհեր Մկրտչյան 5ա։

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում։ Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից։ Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն։

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում։ Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով։

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա։ ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ։ Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը։ Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը լուրջ ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա։ Համաշխարհային մակարդակով ավելի

խոր պատժամիջոցներ կիրառելը հանգեցնել են բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:

Ղեկավարությունը չի ակնկալում, որ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հետագա արժևորում կլինի: Այնուամենայնիվ, Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող է հանգեցնել Հայաստան դեռևս ավելի մեծ արտարժույթի ներհոսքի, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական կայունության վրա: Այս ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերը նշվածի հնարավոր ազդեցությունը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով կամ իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 21-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2021թ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի

նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և Գործնական կիրառություն 2)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ* *(ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հիմնադրամը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող

ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և զուտ ակտիվների սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Տե՛ս ծանոթագրություն 27:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի եկամուտներում և ծախսերում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է եկամուտներում և ծախսերում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են

հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են եկամուտներում և ծախսերում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է եկամուտներում և ծախսերում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	60 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի
Տնտեսական գույք և սարքավորումներ	-	1-5 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է եկամուտներում և ծախսերում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի և վեբ կայքերի համար:

3.4 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են եկամուտներում և ծախսերում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ փոխարժեքային տարբերությունից արդյունքներում, բացառությամբ ֆինանսական ակտիվների արժեզրկման, որն արտացոլված է արժեզրկումից կորուստներ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 22.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկային ավանդները, դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ

համապարփակ արդյունքում և դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն։

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից։ Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա։

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»)։
- «Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ։

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար։ Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով։

Ներդրումներ բաժնետոմսերում

Հիմնադրամի ներդրումները բաժնետոմսերում հաշվառում են իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքով, եթե դրանք բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է համապատասխան դրամական հոսքերը «պահել հավաքագրման համար» և վաճառել դրանք և
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Հիմնադրամն անդառնալի որոշում է կայացրել չափել բաժնային գործիքներն իրական արժեքով՝ դրանց իրական արժեքի հետագա փոփոխություններն արտացոլելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում։

Այլ համապարփակ արդյունքում ճանաչված ցանկացած օգուտ կամ վնաս կմարվի ակտիվի ապաճանաչման ժամանակ։

Դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և ակնկալվող կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ։ Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը։ Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից։

Հիմնադրամը գնահատում է դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝

ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 8-ում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները և ֆինանսական երաշխավորությունները: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 22.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է եկամուտներում և ծախսերում: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է եկամուտներում և ծախսերում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական երաշխավորություններ

Ֆինանսական երաշխավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Այնուհետև, այն ուղիղ գծային մեթոդով ճանաչվում է եկամուտ պարտքային գործիքի ժամկետի ընթացքում, որի գծով ֆինանսական պարտավորությունը առաջացել է:

Հետագայում, ֆինանսական երաշխավորությունները չափվում են ստորև ներկայացվածներից ավելի բարձրով՝

- Ակնկալվող կորստի պահուստ ֆինանսական երաշխավորությունների գծով,
- Սկզբնապես ճանաչված արժեք հանած ճանաչված եկամտի կուտակային գումար

3.6 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները բաղկացած են սահմանափակ օգտագործմամբ զուտ ակտիվներից և կուտակված արդյունքից:

Սահմանափակ օգտագործմամբ զուտ ակտիվները ներառում են հիմնադրամի և այլ դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցները՝ շահառու ընկերություններում ներդրումներ կատարելու, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման և ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացման համար:

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների արդյունքը:

3.7 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են եկամուտ և ծախսեր՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային

պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.9 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.10 Եկամուտներ

Հիմնադրամի եկամուտները հիմնականում ձևավորվում են շնորհներից, հաճախորդների հետ պայմանագրերից և տոկոսներից:

Շնորհներից եկամուտներ

Շնորհներից եկամուտը ճանաչվում է, երբ հավանական է, որ դրանք կստացվեն և եկամտի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնադրի կողմից հատկացվող միջոցները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դրանք դառնում են ստացման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ միջոցները տրամադրվում են որոշակի պայմաններով, որի դեպքում ստացված միջոցները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված եկամուտը ճանաչվում է եկամուտներում և ծախսերում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն փոխհատուցում է համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել է:

Շնորհները ճանաչվում են եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող և շենքեր	Սարքավո-րումներ	Տրանսպոր-տային միջոցներ
Սկզբնական արժեք			
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	309,624	84,880	98,068
Ավելացում	-	11,016	-
Օտարում	-	-	(38,469)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	309,624	95,896	59,599
Ավելացում	-	970	-
Օտարում	-	-	(5,700)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	309,624	96,866	53,899
Կուտակված մաշվածություն			
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	21,824	52,523	76,258
Տարվա հաշվարկ	4,944	9,972	5,390
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(38,468)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,768	62,495	43,180
Տարվա հաշվարկ	4,944	8,759	5,390
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(5,700)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,712	71,254	42,870
Հաշվեկշռային արժեք			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	282,856	33,401	16,419
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	277,912	25,612	11,029

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

Սկզբնական արժեք	Համակարգչային ծրագրեր և կայքեր
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	28,078
Ավելացում	820
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,898
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,898
Կուտակված ամորտիզացիա	
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	8,326
Տարվա հաշվարկ	3,306
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,632
Տարվա հաշվարկ	3,320
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,952
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,266
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,946

6 Ներդրումներ բաժնետոմսերում

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ	1,150,500	1,150,500
«Մարկետինգ Ընդ Մենեջմենթ 360» ՓԲԸ	-	21,834
«Մարկետինգ Ընդ Մենեջմենթ 360» ՓԲԸ-ի գծով պահուստ	-	(21,834)
	1,150,500	1,150,500

2009թ.-ին Հիմնադրամը հիմնադրել է (100% բաժնեմասով) «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (ՈՒՎԿ)։ ՈՒՎԿ-ն 2017թ. հունիսի 23-ի կառավարության թիվ 744-Ա որոշմամբ թողարկել և տեղաբաշխել է նոր բաժնետոմսեր, որի արդյունքում Հիմնադրամի բաժնեմասը դարձել է 50.9%։ ՈՒՎԿ-ն հիմնականում զբաղվում է ՓՄՁ սուբյեկտների վարկավորմամբ։

Հիմնադրամի ներդրումը «Մարկետինգ Ընդ Սենեջմենթ 360» ՓԲԸ-ում կազմել է 33.33%։ Այն ամբողջությամբ դուրս է գրվել վերջինիս լուծարման պատճառով։

Հիմնադրամը չի համախմբում ՈՒՎԿ-ի ֆինանսական հաշվետվությունները, քանի որ, համաձայն ղեկավարության գնահատման, Հիմնադրամը ՈՒՎԿ-ի նկատմամբ չունի որևէ վերահսկողություն (ղեկավարության գնահատումներն ու դատողությունները ներկայացված են ծանոթագրություն 21-ում)։

7 Բանկային ավանդներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ավանդների համախառն արժեք	2,021,563	1,994,296
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(113,861)	(21,576)
	1,907,702	1,972,720

Ստորև ներկայացված է բանկային ավանդների արժեզրկման պահուստի շարժը.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	21,576	14,850
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	92,285	6,726
Տարեվերջի մնացորդ	113,861	21,576

Բանկային ավանդների հիմնական պայմանները ներկայացված են ստորև.

	Մարման ժամկետ	Միջին կշռված տոկոսադրույք	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	2022-2029թ.	6.3%	1,596,084
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	2022-2029թ.	9.9%	413,528
«Յունիբանկ» ԲԲԸ	ցպահանջ	7.0%	11,951
			2,021,563

	Մարման ժամկետ	Միջին կշռված տոկոսադրույք	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	2022-2027թ.	6.41%	1,561,334
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	2022թ.	10.12%	411,270
«Ինեկոբանկ» ՓԲԸ	2022թ.	8.0%	10,548
«Յունիբանկ» ԲԲԸ	ցպահանջ	7.0%	11,144
			1,994,296

Հիմնադրամը փոքր և միջին ձեռնարկություններին և սկսնակ գործարարներին տրամադրում է բանկային երաշխավորություններ՝ վերջիններիս վարկային պարտավորությունների կատարման համար: Երաշխավորության համար գրավադրվում են Հիմնադրամի բանկային ավանդները: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երաշխավորությունների տրամադրման նպատակով սահմանափակման տակ գտնվող բանկային ավանդների ընդհանուր գումարը կազմել է 878,438 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31՝ 1,119,419 հազար դրամ):

Բանկային ավանդներն արտահայտված են հայկական դրամով:

8 Դեբիտորական պարտքեր

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Համախառն գումար	Արժեզրկման գծով պահուստ	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ			
Ստացվելիք շնորհներ	20,161	-	20,161
Սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորություններից առաջացած դեբիտորական պարտքեր	548,702	(534,192)	14,510
Փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրված երաշխավորություններից առաջացած դեբիտորական պարտքեր	528,849	(523,674)	5,175
Այլ դեբիտորական պարտքեր	2,033	-	2,033
	1,099,745	(1,057,866)	41,879
Ոչ ֆինանսական ակտիվներ			
Տրված կանխավճարներ	2,216	-	2,216
Կանխավճարված հարկեր	1,658	-	1,658
	1,103,619	(1,057,866)	45,753

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	Համախառն գումար	Արժեզրկման գծով պահուստ	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ			
Ստացվելիք շնորհներ	7,133	-	7,133
Սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորություններ	548,406	(525,275)	23,131
Փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրված երաշխավորություններից առաջացած դեբիտորական պարտքեր	477,200	(474,920)	2,280
Այլ դեբիտորական պարտքեր	1,642	-	1,642
	1,034,381	(1,000,195)	34,186
Ոչ ֆինանսական ակտիվներ			
Տրված կանխավճարներ	195	-	195
Կանխավճարված հարկեր	1,248	-	1,248
	1,035,824	(1,000,195)	35,629

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Դեբիտորական պարտքերի համար ակնկալվող կորստի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	1,000,195	829,680
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	57,671	170,515
Տարեվերջի մնացորդ	1,057,866	1,000,195

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, Հիմնադրամը ֆինանսական աջակցություն է տրամադրում ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին՝ վերջիններիս վարկային պարտավորությունների համար որպես երաշխավոր հանդես գալով: Երաշխավորության համար գրավադրվում են Հիմնադրամի բանկային ավանդները: Հետագայում, գործարարների կողմից վարկային պարտավորությունների չկատարման պարագայում, բանկերը Հիմնադրամի ավանդային հաշիվներից մարում են երաշխավորված գումարները: Այդ պահին Հիմնադրամը ճանաչում է դեբիտորական պարտք ՓՄՁ-ներից և սկսնակ գործարարներից: Հետագայում Հիմնադրամը կա՛մ կնքում է համաձայնագրեր պարտքի մարման ժամանակացույցի վերաբերյալ, կա՛մ դիմում է դատարան, եթե գործարարի հետ համաձայնության չեն գալիս:

23 (գ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս ծանոթագրություն 23 (ա)-ն՝ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Կանխիկ միջոցներ	389	350
Բանկային հաշիվներ	151,086	323,983
	151,475	324,333

Տե՛ս ծանոթագրություն 23 (ա)-ն դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

10 Սահմանափակ օգտագործմամբ զուտ ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ կառավարության կողմից Հիմնադրամի ստեղծման ժամանակ սկզբնական գույքային ներդրում	8,938	8,938
Ներդրումներ իրականացնելու համար ստացված գումարներ	1,150,500	1,150,500
ՀՀ պետական բյուջեից ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար ներդրում	118,535	118,535
Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզ. 19-րդ միջ դրամագլուխ	187,500	187,500
Դրամագլուխ	1,831,767	1,831,767
	3,297,240	3,297,240

ՀՀ կառավարության կողմից ներդրումների համար ստացված գումարը Հիմնադրամը ներդրել է «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բաժնետիրական կապիտալում:

Դրամագլուխն իրենից ներկայացնում է Հիմնադրամի ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից և միջազգային դոնոր կազմակերպություններից ստացված ֆինանսավորումները:

11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	368,217	402,050
Վերադասակարգված հետաձգված եկամտից	-	2,295
Եկամուտներում և ծախսերում ճանաչված եկամուտ	(28,291)	(36,128)
Տարեվերջի մնացորդ	339,926	368,217

12 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Փոխառություն ՀՀ Ֆինանսների նախարարությունից	360,290	334,531
Վարկ ՀՀ Ֆինանսների նախարարությունից	407,965	407,966
Այլ փոխառություններ	15,927	15,927
	784,182	758,424

Ստացված վարկերի և փոխառությունների պայմանները ներկայացված են ստորև.

	Տոկոսադրույք	Մարման ժամկետ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Փոխառություն ՀՀ Ֆինանսների նախարարությունից	անտոկոս	2028թ.	360,290	334,531
Վարկ ՀՀ Ֆինանսների նախարարությունից	0.001%	տես ստորև	407,965	407,966
Այլ	անտոկոս	տես ստորև	15,927	15,927
			784,182	758,424

2020թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ Ֆինանսների նախարարությունից փոխառությունը ստացվել է Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման շրջանակներում: Միջոցառումն իրականացվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջոցով՝ արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրման եղանակով: Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների 75%-ը հատկացվում է որպես 8 տարվա մարման ժամկետով անտոկոս փոխառություն, իսկ 25%-ը՝ որպես դրամաշնորհ: Փոխառության գումարն ուղղվել է արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրման համար ձևավորված դրամագլխի համալրմանը: Փոխառության պայմանագիրը չի նախատեսում ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված է փոխառությունից

օգուտը, ուստի Հիմնադրամը շուկայականից ցածր տոկոսադրույքից օգուտը ճանաչում է տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունում:

2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունից վարկն իրենից ներկայացնում է 2009թ.-ին կնքված N3/2009 վարկային պայմանագրի շրջանակում ստացված գումարները: Համաձայն պայմանագրի Հիմնադրամը ստացված վարկային միջոցներով երաշխավորել է «Կոնսեր» ՍՊԸ-ի վարկային պարտավորությունները: Հետագայում «Կոնսեր» ՍՊԸ-ն չի կատարել իր պարտավորությունները և ճանաչվել է սնանկ: Վարկային պայմանագրի դրույթների համաձայն Հիմնադրամը վարկը պետք է վերադարձնի նպատակային մուտքերի ստացման դեպքում:

Այլ փոխառությունը Հիմնադրամին տրամադրվել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից գյուղատնտեսական տեխնիկայի տեսքով 2013թ. հունիսի 20-ին կնքված պայմանագրի հիման վրա: Փոխառությունը ենթակա է մարման գյուղատնտեսական տեխնիկայի իրացմանը զուգընթաց: 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի պաշարներում առկա են դեռևս չիրացված տեխնիկական սարքավորումներ՝ փոխառության գումարի չափով:

Տե՛ս ծանոթագրություն 23 (ա)-ն վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտման համար:

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,877	2,533
Պարտավորություններ պետական բյուջեին	42,768	44,233
Պարտավորություններ աշխատակիցներին	25,372	22,611
Կանխավճարներ	-	2,716
	72,017	72,093

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Տե՛ս ծանոթագրություն 23 (ա)-ն առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

14 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	192,447	245,107
Ավելացումներ	203,196	350,126
Փոխարժեքային տարբերության ազդեցություն	(8,830)	550
Շնորհների վերադարձ	(21,211)	(680)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհների	-	(2,295)
Վերադասակարգում այլ պարտավորության	-	(1,879)
Ենթաշնորհների տրամադրում	-	(13,310)
Եկամուտներում և ծախսերում ճանաչված եկամուտ	(253,749)	(385,172)
Տարեվերջի մնացորդ	111,853	192,447

Ստացված շնորհները ներառում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից ստացված շնորհ 177,800 հազար դրամի (2021թ.՝ 248,813 հազար դրամ)։

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը ներառում է ՀՀ կառավարությունից 100,870 հազար դրամ՝ ՓՄՁ-ների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման սուբսիդավորման համար ստացված գումարը (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 100,870 հազար դրամ)։

15 Ֆինանսական երաշխավորություններ

Հիմնադրամը կանոնադրական նպատակների շրջանակներում երաշխիքներ է տրամադրում ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին՝ վերջիններիս բանկային վարկերի տրամադրումը հնարավոր դարձնելու նպատակով։ Որպես Հիմնադրամի կողմից տրամադրված երաշխիքների ապահովման միջոց՝ սահմանափակումներ են դրվում Հիմնադրամի բանկային ավանդների վրա։

ՓՄՁ-ների և սկսնակ գործարարների վճարունակության վատթարացման դեպքում վարկերի հետվճարումները կատարվում են Հիմնադրամի ավանդների հաշիվներից։ Վճարված գումարների դիմաց Հիմնադրամը ճանաչում է դեբիտորական պարտքեր տվյալ շահառուներից և հետագայում հատկացումներ է անում դեբիտորական պարտքերի անհավաքագրելության պահուստին՝ ՖՀՄՍ 9 *Ֆինանսական գործիքներ* ստանդարտի համաձայն։ 2022թ. ընթացքում այդ դեբիտորական պարտքերի պահուստին զուտ հատկացումները կազմել են 57,671 հազար դրամ (2021թ.-ի ընթացքում 170,515 հազար դրամ)։

Երաշխավորությունների ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում ՀՀ կառավարության և այլ դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված դրամագլուխները։

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական երաշխավորությունների զծով մնացորդը հաշվարկված երաշխավորությունների գծով գնահատված արժեզրկման չափով, կազմել է 98,946 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 151,803 հազար դրամ)։

Ստորև ներկայացված է ֆինանսական երաշխավորությունների շարժը.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Հունվարի 1-ի դրությամբ	151,803	86,941
Տարվա ընթացքում աճ	-	64,862
Տարվա ընթացքում հակադարձում	(52,857)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	98,946	151,803

16 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	253,749	385,172
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	28,291	36,128
	282,040	421,300

17 17 Ծրագրերի իրականացման ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	40,056	64,120
Շահառուների համար աշխատանքի միջոցներ	48,428	43,897
Ֆինանսական աջակցություն շահառուներին	8,693	5,911
Գործուղումներ	5,604	1,047
Այլ	13,176	58,302
	115,957	173,277

Ստորև ներկայացված են ծրագրերի իրականացման ծախսերն ըստ ֆինանսավորման աղբյուրների.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ՀՀ պետական բյուջե	-	53,623
Երևանում Ֆրանսիայի ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ - OFII և NIFG	408	48,187
Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետություն-GIZ	52,460	-
Եվրոպական հանձնաժողով - COSME	-	21,785
Եվրոպական հանձնաժողով-ERASMUS	12,092	10,594
Եվրոպական միություն – Smart farming	23,853	-
Վարչապետի աշխատակազմ-TPQI	9,527	12,883
UNIDO	4,080	15,169
Այլ	13,537	11,036
	115,957	173,277

18 Գործառնական ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	306,436	302,721
Մաշվածություն և ամորտիզացիա	31,813	33,031
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	21,746	13,270
Աջակցություն ՓՄՁ-ներին	-	2,246
Վառելիքի, գործուղման և ներկայացուցչական ծախսեր	39,935	22,732
Վարձակալության գծով ծախսեր	5,312	3,626
Այլ	29,175	27,235
	434,417	404,861

19 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Ֆինանսական եկամուտ		
Երկարաժամկետ փոխառությունների իրական արժեքի ճշգրտում	-	251,823
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	139,668	170,544
Այլ եկամուտ	24,372	11,802
	164,040	434,169
Ֆինանսական ծախսեր		
Փախառության գծով պարտավորությունների զեղչման հակադարձում	25,759	23,854
	25,759	23,854
Զուտ ֆինանսական եկամուտ	138,281	410,315

20 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	165	8,051
	165	8,051

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(121,722)		137,796	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2021թ.՝ 18%)	(21,910)	18.0	24,803	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	44,356	(36.4)	(28,917)	(20.9)
Ժամանակավոր տարբերություններ, որոնք չեն ճանաչվել որպես հետաձգված հարկային ակտիվ	(22,611)	18.6	(3,937)	(2.9)
Շահութահարկի զծով ծախս	(165)	0.1	(8,051)	5.8

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Եկամուտներում և ծախսերում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	180,035	10,381	190,416
Բանկային ավանդներ	3,884	16,611	20,495
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,065	498	4,563
Ֆինանսական երաշխավորություններ	27,325	(9,515)	17,810
	215,309	17,975	233,284
Փոխառություն	(41,034)	4,637	(36,398)
	(41,034)	4,637	(36,398)
Հետաձգված հարկային ակտիվների գնահատում	(174,275)	(22,611)	(196,886)
Զուտ արդյունք	-	-	-

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2021թ.	Եկամուտներում և ծախսերում ճանաչված	31 դեկտեմբերի 2021թ. (վերաներկայացված)
Հետաձգված հարկային ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	149,342	30,693	180,035
Բանկային ավանդներ	2,673	1,211	3,884
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,663	1,402	4,065
Ֆինանսական երաշխավորություններ	15,660	11,665	27,325
	170,338	44,971	215,309
Փոխառություն	-	(41,034)	(41,034)
	-	(41,034)	(41,034)
Հետաձգված հարկային ակտիվների գնահատում	(170,338)	(3,937)	(174,275)
Զուտ արդյունք	-	-	-

21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Հիմնադրամը բոլոր դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ: Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հաշվարկելու համար Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան: Պահուստի

դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով դեբիտորների տարբեր տեսակներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն։

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Հիմնադրամի՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա։ Հիմնադրամը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար։ Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել։ Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում։

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է։ Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է։ Հիմնադրամի պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել դեբիտորների՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը։ Հիմնադրամի դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կարուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է ծանոթագրություն 23գ-ում։

Բաժնետոմսերում ներդրումների նկատմամբ վերահսկողություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, Հիմնադրամն ունի 50.9% ներդրում «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունում (ՈւՎԿ)։

Ղեկավարության գնահատմամբ Հիմնադրամը ՈւՎԿ-ի նկատմամբ ուղղակի կամ միջնորդավորված վերահսկողություն չունի, քանի որ չի մասնակցում վերջինիս կառավարմանը, ներկայացված չէ ՈւՎԿ-ի տնօրենների խորհրդում և որևէ այլ կերպ չի ազդում ՈւՎԿ-ի գործունեության վերաբերյալ որոշումների կայացմանը։ Փոխարենը, Հիմնադրամը և ՈւՎԿ-ն գտնվում են ՀՀ կառավարության՝ մասնավորապես ՀՀ Ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր վերահսկողության տակ։ Այդ իսկ պատճառով Հիմնադրամը տվյալ ներդումը հաշվառվում է որպես ֆինանսական ակտիվ՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի։

ՈԻՎԿ-ում ներդրումը չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է իրական արժեքի լավագույն գնահատականը, քանի որ Հիմնադրամին պատկանող բաժնետոմսերը չեն շրջանառվում ակտիվ շուկայում, գտնվում են ՀՀ կառավարության վերահսկողության տակ, և տեղի չեն ունեցել ՈԻՎԿ-ի բիզնես ռազմավարության, գործունեության կամ շուկայի այնպիսի փոփոխություններ, որոնք էական ազդեցություն կունենային ներդրումների իրական արժեքի վրա։

Ֆինանսական երաշխավորություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 15-ում Հիմնադրամը կանոնադրական նպատակների շրջանակներում երաշխիքներ է տրամադրում ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին՝ վերջիններիս բանկային վարկերի տրամադրումը հնարավոր դարձնելու նպատակով։

Հիմնադրամը ֆինանսական երաշխավորությունները սկզբնապես ճանաչում է իրական արժեքով։

Հետագայում, ֆինանսական երաշխավորությունները չափվում են ակնկալվող կորստի պահուստի չափով, քանի որ Հիմնադրամի պարագայում այն գրեթե միշտ գերազանցում է երաշխավորության սկզբնապես ճանաչված արժեք հանած ճանաչված եկամտի կուտակային գումարը։

Ակնկալվող կորստի պահուստի որոշման հիմք է ընդունվել 2 տարվա ցուցանիշների վերլուծությունը՝ յուրաքանչյուր տարվա մեջ տրամադրված երաշխավորության և փաստացի կորստի հարաբերությամբ, որը 2022թ.-ի համար կազմել է 11.3% (2021թ.՝ 14%)։

22 Ֆինանսական գործիքներ

22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր	45,753	35,629
Բանկային ավանդներ	1,907,702	1,972,720
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	151,475	324,333
	2,104,930	2,332,682
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքով		
Ներդրումներ բաժնետոմսերում	1,150,500	1,150,500
	1,150,500	1,150,500
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	3,255,430	3,483,182

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	784,182	758,424
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	29,249	25,144
Ֆինանսական երաշխավորություններ	98,946	151,803
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	912,377	935,371

23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է հիմնականում գործառնական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է հիմնականում Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում ստացվող շնորհներից, որոնք, ի սկզբանե, հիմնականում արտահայտված են եվրոյով:

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում արտարժույթով (եվրո) են արտահայտված միայն դեբիտորական կարտաքերը, որոնք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 19,632 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31՝ 5,374 հազար դրամ):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ եվրոյի նկատմամբ դրամի 10% (2021թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2021թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 10%):

Դրամի արժևորումը եվրոյի նկատմամբ 10%-ով (2021թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	Եվրոյի ազդեցություն	
	2022թ.	2021թ.
Շահույթ կամ վնաս	(1,963)	(537)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտարժույթով դրամաշնորհային ծրագրերի պայմանագրերից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2022թ.	Մինչև 3 ամիս	3 ամսից մինչև 1 տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Վարկեր և փոխառություններ	-	423,893	562,500	986,393
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	29,249	-	-	29,249
Ֆինանսական երաշխավորություններ	-	98,946	-	98,946
	29,249	522,839	562,500	1,114,588

2021թ.	Մինչև 3 ամիս	3 ամսից մինչև 1 տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Վարկեր և փոխառություններ	-	423,893	562,500	986,393
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	25,144	-	-	25,144
Ֆինանսական երաշխավորություններ	-	151,803	-	151,803
	25,144	575,696	562,500	1,163,340

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, բանկային ավանդները և դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները, բանկային ավանդները և դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները, բանկային ավանդները և դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ներդրումներ բաժնետոմսերում	1,150,500	1,150,500
Դեբիտորական պարտքեր	45,753	35,629
Բանկային ավանդներ	1,907,702	1,972,720
Մնացորդներ բանկերում	151,475	324,333
	3,255,430	3,483,182

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով: Բանկերում ավանդների մնացորդներից 878,438 հազար դրամը գտնվում է սահմանափակման տակ՝ պայմանավորված ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորություններով (2021թ.

դեկտեմբերի 31-ին՝ 1,119,419 հազար դրամ)։ Երաշխավորություններ տրամադրելիս Հիմնադրամը վստահում է բանկի կողմից հաճախորդի վճարունակության ստուգման և վարկունակության ռեյթինգի որոշման ընթացակարգերին։

Բաժնետոմսերում ներդրման մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ունի բավականին կայուն ֆինանսական ցուցանիշներ։

Դեբիտորական պարտքեր

Հիմնադրամի դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին երաշխիքների տրամադրման գծով։ Գործարարների վճարունակության վատթարացման դեպքում վարկերի հետվճարումները կատարվում են Հիմնադրամի ավանդների հաշիվներից։ Վճարված գումարների դիմաց Հիմնադրամը ճանաչում է դեբիտորական պարտքեր տվյալ շահառուներից։

Հիմնադրամի քաղաքականությունն է երաշխավորություններ տրամադրել միայն իրատեսական բիզնես պլաններ ունեցող սկսնակ և գործող գործարարների, որոնց վարկունակությունը հաստատվում է նաև բանկի կողմից։ Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր գործարարի համար երաշխավորության սահմանաչափի որոշմամբ։

Հիմնադրամը բոլոր դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ։

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ։ Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերի վրա։

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2022թ.-ին և 2021թ.-ին առաջացած դեբիտորական պարտքերի հավաքագրելիության կշռված միջին ցուցանիշների վրա։ Այս դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոնները, որոնք ազդեցություն ունեն դեբիտորների՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա։ Հիմնադրամը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում երկրի համախառն ներքին արդյունքը և գործազրկության մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով։ Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չէ։ Արդյունքում, 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրութամբ երկու տարուց քիչ վաղեմություն ունեցող դեբիտորական պարտքերի համար կիրառվել է 91% դրույքաչափ (2021թ.-ին՝ 89%)։

Երբ հավանական չէ դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են)։ Առաջացումից հետո 2 տարի անց մարված չլինելը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ, քանի որ դրանց առաջացման պահին արդեն իսկ դեբիտորները համարվել են անհուսալի վարկ տրամադրած բանկի կողմից։

24 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա։ Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

24.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները գրեթե հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հիմնադրամը «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ում ներդրումը չափում է իրական արժեքով, և քանի որ Հիմնադրամին պատկանող բաժնետոմսերը չեն շրջանառվում ակտիվ շուկայում, գտնվում են ՀՀ կառավարության վերահսկողության տակ, և տեղի չեն ունեցել ՈՒՎԿ-ի բիզնես ռազմավարության, գործունեության կամ շուկայի փոփոխություններ, ներդրումների սկզբնական արժեքը հանդիսանում է իրական արժեքի լավագույն գնահատականը: Հիմնադրամի բաժնետոմսերում ներդրումների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշվել է՝ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Հիմնադրամի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

25 Պայմանականություններ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերն են Հիմնադիրը՝ ի դեմս ՀՀ կառավարության, հոգաբարձուների խորհրդի անդամները և հիմնական ղեկավար անձնակազմը:

26.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է ՀՀ կառավարության կողմից: Հիմնադրամի կառավարման գլխավոր մարմինը ՀՀ վարչապետի կողմից գլխավորած հոգաբարձուների խորհուրդն է:

26.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	30,909	28,591

27 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2.6-ում, Հիմնադրամի քաղաքականությունը ընթացիկ տարում հայտնաբերված սխալների հետադարձ ճշգրտումն է: 2022թ.-ի ընթացքում ղեկավարությունը նկատել է, որ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա եկանուտների և ծախսերի մասին հաշվետվության որոշ հոդվածներ ճիշտ չեն ներկայացվել: Հետևաբար կատարվել են որոշ ճշգրտումներ և Հիմնադրամի 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն ուղղվել են հետադարձ՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների:

Կատարվել են որոշ վերահաշվարկներ, որոնց արդյունքում տեղ են գտել ներքոհիշյալ ճշգրտումները:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախքան վերա-ներկայացումը	Վերաներկա-յացում	Վերաներկա-յացումից հետո
Դեբիտորական պարտքեր (ճշգրտում 1)	180,193	(144,564)	35,629
Մնացորդներ դրամարկղում և բանկերում (ճշգրտում 1)	341,141	(16,808)	324,333
Այլ պարտավորություններ (ճշգրտում 1)	(161,372)	161,372	-
Վարկեր և փոխառություններ երկարաժամկետ (ճշգրտում 2)	562,500	(227,969)	334,531
Կուտակված վնաս (ճշգրտում 2)	(1,181,815)	227,969	(953,846)
	(259,353)	-	(259,353)

Եկամուտների ու ծախսերի մասին հաշվետվության

Հազար դրամ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախքան վերա-ներկայա-ցումը	Վերաներկա-յացում	Վերաներկա-յացումից հետո
Ֆինանսական եկամուտ ճշգրտում 2)	182,346	251,823	434,169
Ֆինանսական ծախս (ճշգրտում 2)	-	(23,854)	(23,854)
	182,346	227,969	410,315

Ճշգրտում 1

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դեբիտորական պարտքը կազմել է 180,193 հազար դրամ: Դեբիտորական պարտքը ներառում էր Հիմնադրամի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության միջև կնքված տնտեսվարող սուբյեկտների՝ չկատարած վարկային պարտավորությունների հետգանձման պահանջի իրավունքը Հիմնադամին փոխանցման իրավունքի մասին կնքված պայմանագրի արդյունքում գրանցված դեբիտորական պարտք՝ 144,565 դրամի չափով: Մույն պայմանագրի շրջանակներում Հիմնադրամը յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի կողմից մարված պարտավորությունը կամ դրա առաձին մասը վճարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է ՀՀ ֆինանսների նախարարություն: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում էր նաև 161,372 հազար դրամի չափով այլ պարտավորություն, որն իրենից ներկայացնում էր ՀՀ ֆինանսների նախարարության փոխանցման ենթակա՝ տնտեսվարող սուբյեկտներից հավաքագրված գումարները: Հավաքագրման ենթակա և ՀՀ ֆինանսների նախարարություն փոխանցման ենթակա գումարների ժամանակավոր տարբերությունը կազմում են հավաքագրված գումարները, որոնք դեռ գտնվում են հիմնադրամի բանկային հաշիվներում, սակայն դեռ չեն փոխանցվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Այս մասով վերոնշյալ դեբիտորական պարտքը և այլ պարտավորությունը դուրս են գրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից և շարունակում են հաշվառվել արտահաշվեկշռային հաշիվներում: Ճշգրտվել են դեբիտորական պարտքերի, դրամարկղում և բանկերում առկա մնացորդների և այլ պարտավորությունների մնացորդները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ճշգրտման արդյունքում 2021թ. դեկտեմբերի 31 դրությամբ.

- Ընթացիկ ակտիվները նվազել են 161,372 հազար դրամով, այդ թվում՝
    - դեբիտորական պարտքերը նվազել են 144,564 հազար դրամով

- մնացորդները դրամարկղում և բանկերում նվազել են 16,808 հազար դրամով:

- Ընթացիկ պարտավորությունները նվազել են 161,372 հազար դրամով:

Ճշգրտում 2

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված երկարաժամկետ փոխառությունը ստացվել էր ՀՀ Ֆինանսների նախարարությունից՝ արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրման համար ձևավորված դրամագլխի համալրման նպատակով: Այն իրենից ներկայացնում էր 8 տարի մարման ժամկետով անտոկոս փոխառություն և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվել է իրական արժեքով:

Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է եկամուտներում և ծախսերում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Այս մասով վերոնշյալ փոխառությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վերաներկայացվել է ամորտիզացված արժեքով: Ճշգրտվել են երկարաժամկետ վարկերի և փոխառությունների, կուտակված վնասի մնացորդները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ճշգրտման արդյունքում 2021թ. դեկտեմբերի 31 դրությամբ.

- Երկարաժամկետ վարկերը և փոխառությունները նվազել են 227,969 հազար դրամով,
- Կուտակված վնասը նվազել է 227,969 հազար դրամով:

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Այս հաշվետվության մեջ արտացոլվել է երկարաժամկետ փոխառությունների իրական արժեքի ճշգրտումը:

Ճշգրտման արդյունքում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

- Ֆինանսական եկամուտն ավելացել է 251,823 հազար դրամով,
- Ֆինանսական ծախսն ավելացել է 23,854 հազար դրամով:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2023 17:20